




ԺԱՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
ԿՐԾՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՅՆՕՐԷՆ-ԽՄԲԱԴԻՐ
ՉԱՐՄԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ ԿԵՉԻԿԵԱՆ

Բ. ՏԱՐԻ

« ՇԱՐԱԹ, 23 ՅՈՒՆԻՍ 1911 »

ԹԻԻ 28

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական կարեւոր զեկոյց

Ներքողեան աշխատեցողութեան տօնին

Լսիր՝ գրականութեան դէմ

Հոգիին գոյութիւնը հաւանականութիւնը

Հայ քաղաքացիութիւնը

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ. — Վերադարձութեան մեզ. եկեղեց

պաշտամունքին. — «Պապին պաշտումը»:

Գերման. Աւետ. եկեղեցի Հռոմի մէջ

ՅՈՒՆԻՍ ԵՒ ՊԱՄԳԻՆԻՅԱՆ. — Առաջին Բրիտանացի

Ներքող Ժամանակեան արտոմութիւն (Շար.) ԼԵՈՆ ԹՈՒՍԹՈՅ

ՇԱՐԹՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ. — Անճանճութեան դիւցազնը

ԱԶԳԱՅԻՆ ԿԱՅՆՔԸ. — Արտաբեկութիւնը Հայոց

մէջ. — Շարժումն լուրեր:

ՎԱՐԴԱՆ ՔՀ. ԱՍԼԱՆԵԱՆ

ԳՐ. ԵՕԼՄԵՋԵԱՆ

« ՏԱԶԱՐ »-ի թէ՛ վարչական եւ թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է
դիմել առ Զարմայր Բահանայ Կեղիւրեան, Կ. Պոլիս, Պէթիկթաշ, Հայոց եկեղեցի:

بشیکتاش ارمنی کلیساخانه « داجار » غزنی مدیری پاپس زارماير افندی

Rev. Père Zarmaïr Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache, Eglise Arménienne.



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԿՐԾՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 23 ՅՈՒՆԻՍ 1911

ԹԻԻ 28

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱՐԵԻՈՐ ԶԵԿՈՅՑ

Ընթերցողները պիտի դիտեն անշուշտ թէ Տաճարի ներկայ թիւով կը վերսկսի Օճառ Եկեղեցիներու բաժինը, որ դուն ուրեք կ'երեւար կրօնաթերթիս մէջ. այդ բաժինն աւելի կարեւորութիւն պիտի ընծայուի այսուհետեւ, ծանօթացնելու համար ինչ կարեւոր շարժում որ տեղի կ'ունենայ Եւրոպայի եւ Ամերիկայի մէջ, ժողովրդեան կրօնական զգացումն եւ բարոյական կեանքը ուժովցնելու համար: Ապահով ենք որ Հայ Եկեղեցականութիւնը շատ թելադրող դասեր պիտի քաղէ ատկէ

Այսօրունէ կը սկսինք նաեւ բանալ: Շարքուան Պատմութիւններու բաժին մը, որոնք իրենց ժողովրդային ու բարոյացուցիչ հանդամանքով կոչուած են բարերար ազդեցութիւն մ'ունենալու՝ մասնաւորապէս մեր երիտասարդութեան վրայ:

Ասկէ զատ մնայուն կարող աշխատատակից մը, որ ինքզինքը Գրիգորիս ծածկանուան տակ պահել կ'ուզէ, յառաջիկայ շարժումնէ սկսեալ պիտի ունենայ հոգեւոր կեանքի նուիրումաւ յօգուածներ հիմնուած Ս. Գրքի հոգեշունչ խօսքերուն վրայ:

Միւս կողմէ, իրենց գրական կարողու-

թեամբ եւ հմտութեամբ ծանօթ աշխատակիցներ, ինչպէս Տեառք Մարկոս Նաթանեան, Արշակ Այսոյանեան, աւելի, յաճախ պիտի երեւան Տաճարի մէջ, գրելով մասնաւորապէս ազգային, պատմական եւ բանասիրական շահեկան նիւթերու վրայ: Ի մօտոյ կը սկսինք հրատարակել նոր մէկ ուսումնասիրութիւնը Տիար Գեորգ Մեսրոպի, որուն՝ Երրայական Մարգարէութեան Մագման վրայ ըրած ուսումնասիրութիւնը այնքան օգտիւ կարդացուեցաւ:

Խմբագրութիւնս ձեռնարկներ ըրած է, ուրիշ եկեղեցական եւ աշխարհական հեղինակաւոր գրողներու աշխատակցութիւնն եւս ապահովելու համար, բաց ի անոնցմէ որոնք այնքան ազնուօրէն կ'աշխատակցին արդէն:

Վստահ ենք որ Պատ. բաժանորդք զնահատելով մեր ջանքերը՝ թերթին լաւագոյն վիճակի մէջ գրուելուն համար, կը հաճին անյապաղ կարգադրել իրենց յետնեալ հաշիւները՝ ուղղակի թերթիս տնօրէնին հետ, կամ մեր Պատ. գործակալներուն միջոցաւ, որոնցմէ եւս կը խնդրենք փութացնել հաշիւներու կարգադրութիւնը, զիսնալով որ տպագրական գործերու մէջ ամէն բան կանխիկ է բացարձակապէս:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔՈՂԵԱՆ ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ (*)

«Ո՞վ ելցէ ի լեառն տեառն կամ
ո՞վ կացցէ ի տեղոց սրբուծեան նորա:»
Սաղմոս, ԽԴ.

Ներչնչեալ մատենագիրներ չափ ինչ կը գրեն բարձր սարերու վսեմ տեսարաններէն ազդուած, եւ մեր Ս. Կրօնի գրեթէ բոլոր առաջնակարգ եղելութիւնները լեռներու հետ կապուած յիշատակներ մը ունին. հոն՝ Իսահակի զոհը Մորէայի գագաթին վրայ, հոս՝ Օրէնքին տուչութիւնը Սինայի բարձունքէն, հունա՝ Ենովայի սիրովը առլցուած Եղիան բաղկատաւած՝ Կարմեղոսի վախերուն առնթներ, ու Դաւիթ մարգարէական արծուի աչքերով դարերու ընդմիջէն կը նշմարէր ու կ'արձանագրէր Պաղեստինի սուրբ սարերուն վերայ յայտնուելիք աւելի խորհրդաւոր եղելութիւնները, երբ կ'ըսէր. «Թափօր եւ Հերմոն յանուն քո ցնծասցեն»: Հայ Առաքելական Եկեղեցին տօնեց Վարդավառ ազգային հին յիշատակով անուանուած տօն մը, որու ի պատիւ երգուած չարականը կը սկսի «Որ ի լերինն ալակերպիւ» պարբերութիւնով, ու կը հասկնանք թէ սրբազան լեռ մըն է թատերաւայրը ա՛յն եղելութեան որուն թարգմանը կ'ուղէ ըլլալ մեր հազներգուն, ու եղելութիւնն ալ է «ալակերպութիւն» մը կամ աւելի նկարագրող բառով պայծառակերպութիւն մը: Ո՞վ է որ կ'ալակերպի եւ ինչո՞ւ երգիչներ իրենց քնարները կը հնչեցնեն փառաբանելու այդ եղելութիւնը:

Ահա՛ սօսի պիտի պատմենք ձեզի, հաւատացեալ եղբայրներ ու քոյրեր՝ Սրբագիր Աւետարաններ են աղբիւրը մեր պատմութեան, եւ ձեր սեւեռուն ուշադրութիւնը կը խնդրեմ պահ մը:

Յիսուս Քրիստոս իր հրապարակային կեանքի երրորդ տարիի միջոցներուն իր տասներկու առաքեալները վեց խմբի բաժ-

նած եւ ղրկած էր Դալիլիայի ամէն կողմերը՝ Աւետարանի սկսուած քարոզութիւնը տարածելու, եւ առաքեալներ յաջող քարոզչական պտոյտէն ա՛յն ինչ վերադարձած էին: Նոյն միջոցին էր որ Յովհաննէս Մկրտիչ գլխատուած էր Հերովդէսէն, ու Պաղեստինի մէջ միակ անունը որ այժմէականն էր, Յիսուսինն էր: Առաքեալներու քարոզչական պտոյտը գամ մի եւս բազմապատկած էր Յիսուսի անուան հըմայքը՝ հոգեւէր ու խանդոտ Դալիլիացիներու մոթին առջեւ Յիսուս՝ իր յոգնած պշակերանները հանգչեցնելու համար՝ անպատ տեղ մը քաշուած էր պահ մը, եւ սակայն Յիսուսի շնորհալի խօսքերուն կարօտ հազարաւոր ժողովուրդներ հոն ալ գացեր էին զինք գտնելու եւ մտիկ ընելու: Հոն կերակրեց տէր Յիսուս ժողովուրդը՝ քանի մը հացեր բազմացնելով իր աստուածային կարողութիւնովը, ու ապա աշակերտներու խմբով կ'ելլէր երկրին սահմանածայրը քաշուելու Դէպ ուղիղ կ'ընթանային անոնք Հերմոնի լեռնաշղթան:

Փրկիպոսի Կեսարիա ըսուած քաղաքին գիւղերէն մէկուն մէջ էին, երբ Յիսուս ըսաւ իր աշակերտներուն. «Ժողովուրդը ի՞նչ կարծիք ունի իմ մասին», ու Պետրոս ըսաւ. ամինուն կողմէ. «Ոմանք կ'ըսեն Նրեմիան, մի քանիները կ'ըսեն Եղիան, ուրիշներ թէ մեծ մարգարէներէն մին ես՝ մ'ռելներէն յարութիւն առած, կամ թէ նոյն իսկ գլխատուած Յովհաննէս Մկրտիչն ես վերկենցաղուած»: Փրկիչը ըսաւ. «Դուք ի՞նչ կարծիք ունիք» Պետրոս ըսաւ. «Տէ՛ր, դուն Քրիստոսն ես, կենդանի Աստուծոյ Որդին»: Յիսուս ըսաւ. «Երեւե՛կ քեզի, Պետրոս՝ վա՛ն զը երկնաւոր Հայրս էր որ քեզի յայտնեց այդ ճշմարտութիւնը:

Այդ դաւանական յայտարարութիւնը թէեւ կը խօսէր Պետրոս, եւ տասներկուքները կը հաւանէին, եւ սակայն անոնք ամենքն ալ դժուարաւ կը սովորէին եւ կ'ըմբռնէին այդ ճշմարտութիւնը: Պէտք էր զէմ յանդիմանական յայտնութիւն մը, որպէս զի իրենց սիրելի Վարդապետին

(*) Անցեալ շաբաթ Թերմը մամուլը դրուելէ ետքն ստացուելով հարկադրանքանք այս օրուան Փոշուլ:

խակական մեծութիւնը ըմբռնէին Իսրայէլի այդ ընտրելագոյն ներկայացուցիչները : Պէտք էր հին անուանի մարգարէներու հետ բաղդատութեան կերպ մը գտնուէր անոնց աչքերուն առջեւ, որպէս զի անոնք փորձառական մէթոտով հասու ըլլային այդ խորախորհուրդ ճշմարտութեան, եւ իրենց իսկ ձեռքերով շօշափէին Կենաց Բանը : Պէտք էր առաքելոց մտքին ու զատողութեան առջեւ պատկերացուէր Բանին գերազանցութիւնը Իսրայէլի աստուածաւոր եւ աստուածախօս ականաւոր նախնիքներուն հանդէպ :

Վեց օր անցեր էին այդ նշանակալից հարց-պատասխանի օրէն ի վեր, երբ Փեր-կիչը իրեն հետ առաւ Պետրոսը, ու Ձեռնութեայ որդիք՝ Յակոբոս ու Յովհաննէս, եւ բարձրացաւ Հերմոն—Թափօրական լեռանց բարձրագոյն կատարը : Լեռները շատ սիրելի էին Տէր Յիսուսին : Եւ յատկապէս իր քարոզութեանց եւ պտոյտներու յոգնութենէն վերջ կը քաշուէր լեռները, եւ գիշերներ կը լուսնէր խոկումներու եւ աղօթքներու տուած ինքզինք : Անոր բարձրագոյն զբաղումը եթէ գործը գթութեան էին, Անոր սիրելագոյն եւ բաղձալի հանգիստն էր Աղօթքը : Լեռանց կատարին վրայ Անիկա աշխարհի ալմուկներէն հեռու, անկախ ամէն կապակցութենէ, ընդարձակ հորիզոններու առջեւ կը վերանայր, կը յափշտակուէր, ու իր սիրտը կը բանար իր Յաւիտեանական Հօրը :

Յնժուռն էր ուրեմն անէր Յիսուս, երբ այսպէս ոտք կը գնէր լեռան վրայ : Բայց չեղում մը կար իր սովորական ընթացքին մէջ. միայնակ չէր Ինչո՞ւ երեքները ու միայն երեքներն էր որ հետ առեր էր : Հոս ի դէպ չէ՞ տեսնել Դաւիթի բողոքախառն հարցումը. «Ո՞վ ելցէ ի լեռան տեանն, կամ ո՞վ կացցէ ի տեղում սրբութեան նորա», ու ինքնախօս պատասխանը, թէ «Որ զընայ ամբիժ, գործէ զարդարութիւն, խօսի զճշմարտութիւն, որ ոչ նենգաւորեաց լեզուաւ ի բով եւ չար ընկերի իւրում ոչ աւար . . . » : Սաղմոս ԺԴ :

Այո՛, տասներկու առաքելոց խմբին մէջ կար անարժան մը՝ Յուզան՝ որ իրա-

ւունք չունէր Աստուծոյ սրբարանը բարձրանալու : Ու երեքները դերազանցօրէն կը ներկայացնէին մարգարէ-Թագաւորին պահանջած կատարելութիւնները իրենց անձին վրայ :

Պետրոս, առաքելոց խմբին մէջ առաջինն էր իր խիզախ եւ ձեռներէց հոգիովը : Աւետարանին տարածման անկէ հեր գործիչ, Եկեղեցիի սիւներէն մին, ամենէն ականաւորը տասներկուքներուն մէջէն՝ Եկեղեցիի կազմակերպական գործին մէջ, բարձր մարդը, սրտագին, խոնարհ, անիրաւութեան դէմ ցասմնալից, Աստուծոյ մարդը՝ բառին լման ասուածովը :

Յակոբոս, առաքելոց խմբին մէջ տարբեր կերպով առաջինը, հզօր իր գործելակերպովը. այնպէս որ Եկեղեցիի հիմնարկութեան առաջին տարիներուն, Եկեղեցիի ուխտեալ թշնամին՝ Հերովդէս՝ է՛ն առաջ զանի՛ կը սպաննէր, հաւատալով թէ աղով նոր կրօնքին լաւագոյն ներկայացուցիչը մէջտեղէն վերցուցած կ'ըլլար : Առաջին մարտիրոսն էր առաքելական խմբին :

Յովհաննէս, չորրորդ Աւետարանին խմբագիրը, առաքելոց մէջ Յիսուսի մտերիմը, առաջինը իր խորհրդագրած բնաւորութեամբը. Յիսուսի յարութեան առաջին հաւատացեալը, եւ բոլոր զարերու մէջ Բանին Աստուածութեան ամենահզօր քարոզիչը :

Ահա՛ այսպիսի լսեմ անհասներ էին երեքները, որոնք կ'արժանանային ընկերանալու Տէր Յիսուսին :

Գիշերուան մէկ միջոցին, մինչ Յիսուս աղօթքի եւ փառաբանութեան զբաղած էր, ահա իր Աստուածային Անձէն դուրս կը պոռթկար անմատոյց լոյսի ճաճանչագեղ հեղեղը, եւ գիշերին մթութեան քողը կը պատուէր : Լոյսի հեղեղին մէջ կը ձերմկնային անոր զգեստները, ու արեւի պէս պայծառացած իր զէմքէն լոյսի շողեր կ'արձակուէին ապշած աշակերտներու շրջմորած աչքերուն, եւ անոնք ահեղ այդ տեսարանին առջեւ զարհուրանքէն կը թմրէին : Ամպ մը կուգար վերէն հովանաւորել գիշերը, եւ ահա նախա-

մարգարէն Մովսէս իր փառքովն եւ լուստպօակ եղջիւրները գլխուն՝ կը փութար հասնիլ այդ տեսարանին։ միւս կողմէն կը տեսնէին փոթորիկներու դէմ կուրծք ցնցող մարգարէն՝ Եղիա, որ կը սուրար երկինքէն, հասնելու փառաւորեալ Յիսուսին, որ այդպէս շողարձակ կը յայտնուէր իր բովանդակ էութեամբը Սուրբ այդ լիւրան ամպածրար գազաթին վրայ։ Ապա Ամենակային ձայնը՝ որ կը զողացնէր անհունութիւնը եւ կը հնչէր անոնց ականջներուն. «Ասիկայ է իմ սիրելի որդիս որուն հաւնեւ եմ, առո՛ր յընցեմ»

Պետրոս, թէեւ զարհուրած, բայց կ'ուզէ խօսիլ ուշաթափուած՝ իր սիրելի վարդապետին անձը պարուրող փառքի այս տեսարանին առջեւ, չի գիտեր թէ ի՞նչ պիտի խօսի. ժուռ կուգայ Եսային, փոխ կ'ուզէ առնել Դաւիթի սաղմոսարանէն, կը մոռնայ վերյուշել Ամբակունձի ու իր գծազրած պատկերը. «Ճառագայթք նորա իբրեւ զլոյս եղիցին եւ եղջիւրք ի ձեռնն նորա...» Ամբ. Գ. Կ'ուզէ որ յաւիտեան տեւէր այդ տեսարանը, կ'աղաղակէ. «Տէ՛ր, աղէկ է որ մենք հոս կենանք, ու երեք հատ տաղաւարներ կը շինենք, մէկը քեզի, մէկը Մովսէսին ու միւսը Եղիային համար»

Դաւիթի սրտին բաղձանքն էր նուիրական սարին վրայ ամբիծ մարդիկ, Աստուծոյ Հոգիէն առաջնորդուած վսեմ մարգիկներ միայն ելած սեանել. եւ Առաքելոց մեծագոյններուն հետ ահա՛ կը տեսնենք որ մարգարէներու հաշակաւորներն են որ տեսարանին վրայ կը յայտնուին։

Մովսէս. Ո՛վ չի գիտեր անոր մեծագործ կ'անքը. պալատական կեանքը կը ձգէր անիկա հայրենիքի սիրուն, եւ հովուական կեանքի կը զիջանէր։ Սինալի սարէն պարգեւ կը բերէր մարդկութեան՝ բարոյական կատարեալ օրէնքը, բռնակալ Փարաւոններու ձեռքէն ազգը ազատելէ վերջ։ Մեծանուն օրէնսդիր, անմահ զեւանագէտ, հզօր ուղմիկ, անի երգից աշխարհի ստեղծումը, պատմեց ազգաց ծանախէմ էր

գումը։ Մեծ քահանայ իտէականին, աւնոր լուսոյ ճառագայթներով փառաւորսւած երեւցաւ հիացած ժողովուրդին, եւ իր մահին յուղարկաւորներ եղան երկինքի զարթուն զուարթունները։ Հնութեան մեծագոյն մարդն էր ան։

Եղիա։ Հզօր իր նկարագրով, մէկ ուրիշ պարծանքը մարգարէներու դպրոցին, աղօթքի մարդը որ սովը կը բերէր՝ ցնցելու բարոյապէս մեռնելու մօտ Իսրայէլը. յանդգնութեան մարմնացումը, անաւոր՝ երբ կը յանդիմանէր Իսրայէլի բռնաւորներուն ամպարշտագոյնը, սոսկալի՝ իր վրէժխնդրութիւնովը Աստուծոյ պաշտօնը անարգող Բահադի քուրմերուն դէմ։ Վսեմ, արի, ու երկինքը տարուած՝ ի վարձ իր բարձր կատարելութիւններուն։

Կը խօսին, եւ առաքելաբ մտիկ կը գնեն. անոնք կը խօսին փառաց Տիրոջ հետ, իր կատարելիք մեծ գործին մասին, Երուսաղէմի մէջ իր կրելիք չարչարանքին ու խաչին մասին։

Հոն, այդ ժամուն ու այդ ցնցող յայտնութեան առջին էր որ առաքելները սերտեցին, սովորեցան ու հասկցան թէ իրենց խոնարհ վարդապետը որ հակառակողներէ նազովրեցի կը կոչուէր արհամարհանքով, անիկա որ իրենց հետ կը շրջէր, կը յոգնէր, կ'անօթնար, կը ծաւաւնար եւ բոլոր մարդկային կիրքերն ունէր իրենց պէս, բացի մեղիքէն, էր փառաց Տէրը, բարձրեալ Աստուծոյ սիրելի Որդին։ Հոն ըմբռնեցին թէ՛ Մեծիային փառաց այդ յայտնութեան առջեւ զարմացած վերջին մարգարէն՝ Մազաբիա՝ գոռացել էր. «Եւ ո՞ր ժուժկալեացէ աւուր մտի նորա եւ կամ ո՞ հանդարտեացէ յայտնութեան նորա»։ Սուրբ Առաքելներ հոն այդ պահուն կշռեցին, բաղդատեցին իրենց մեծագոյն մարգարէներու դիրքը՝ Յիսուսի անձնաւորութեան հետ։

Հրեզնէն կառքերով վերափոխուած մարգարէն՝ երկինքէն, եւ 15 դարերէ ի վեր մեռած մարգարէն՝ դժոխքէն կուգային խոնարհ ծառայի դիրքով իրենց վարդապետին մօտ, ու անոնց փառքը որքան խաբհի ստեղծումը, պատմեց ազգաց ծանախէմ էր

վառ ու շողարձակ փառքին առնթեր։ Որքան համեստ են անոնք երկուքն ալ, թէեւ հնացեալ հմտութեամբ, երբ կը խօսակցին Յիսուսին հետ։ Գիտեն անոնք Մեծին Պօղոսի դաւանագիրը. «Զի ի Յիսուս Բրիստոս ամենայն գանձը իմաստութեան եւ գիտութեան ծածկեալ կան»։ Քանի՜ աղու աղերսանքներով անոնք կ'աղաչեն որ մարդացեալ Աստուածորդին փութացնէր մարդեղութեան նպատակը, արագացնէր նոր Իսահակը, Գողգոթայի սուրբ սարին վրայ իր զոհաբերութեան ժամը, որպէս զի գրկախառնուէին երկինք ու երկիր, ու հնչէր ժամ առաջ մարդկութեան ոսկեղարը։

Խոր խորհրդածութեան արժանի պարագայ.— Երկնային գաղտնիքներու արդէն թափանցող մեծ մարգարէնիւր եւ Աստուածորդին կը խօսին պարտականութեան կատարումին վրայ, իսկ զեռ աշխարհի խարուսիկ սկզբունքները չմոռցող առաքեալները փառքին մէջ հանգրստ մնալու խորհուրդին մէջ են։

Կ'անցնի փառաց պահը, եւ Յիսուս մինակ կը գտնուի իր աշակերտներտնեւրուն հետ, իր սովորական երեւոյթին ներքեւ, եւ միասին կ'իջնեն լեռնէն։

Ահա՛ օրուան տօնին ամբողջ դրուագը։ Հետաքրքրական յայտնութիւն մը կը խօսի մեզի գիտնական աշխարհը, Աստեղագէտներ շատ խոշոր կարծիք մը կազմած էին առաստառն աստղին (Արուսեակ) մասին. կ'ենթադրէին որ արեւին մօտ միծութիւն կամ անոր հաւասար լոյս ունէր անիկայ, բայց երբ առաջին անգամ պատեհութիւն ունեցան հղօր հեռագրատակներով քննել Արուսեակին անցքը արեւին սկաւառակին վրայէն, հոն ու այդ ժամին ըմբռնեցին աստեղագէտներ թէ առատուան աստղին լոյսը խորապէս նսեմացաւ արեւին ճաճանչներուն առջեւ, եւ ահեղ արեւին միծութեան մօտիկ աննշան կէտի մը վերածուեցաւ անոր կարծեցեալ միծութիւնը։

Արդի դարուն այս գիտուններուն նման՝ առաքեալներ վերջ տուին իրենց ազգային համոզումներուն, եւ ըմբռնեցին թէ երբ

Յիսուս կ'ըսէր՝

Յովնանեմ մեծ եմ ես,

Սողոմոնեմ մեծ եմ ես,

Տաճարեմ մեծ եմ ես,

ու իրենք վարանոտ կը մնային ըմբռնել զՅիսուս ինչպէս որ էր, Թափօրական լեռան վրայ տեղի ունեցած այս պայծառակերպութիւնը վերջնականապէս եւ փորձառապէս ապացոյց տուաւ իրենց թէ Յիսուս է Բրիստոսը, կենդանի Աստուծոյ Որդին, եւ Ան ունի իշխանութիւն ամենայնիւ. Երջանիկ առաքեալներ, որոնք արժանի եղան մարմնաւոր աչքերով տեսնել ու վայելելու անտեսանելին ու զգալու անիմանալին։

Իցէ՛ թէ Շնորհաց Հոգին լուսեղէն ամպին նման հովանաւորէր եւ՝ զմեզ, եւ մեր ալ հոգիները ընդունակ ըլլային ճանշնալու փառաց Տէրը իր միծութեանը բոլոր լրութեամբ։

Աւուրս շնորհիւ Փրկիչը արժանի ընէ մեզ ամենքս տեսնել զինքը ինչպէս որ է, եւ յագեհալ իր ապագայ փառաւոր գալստեան մեծ օրին մէջ՝ իր տեսչալի տեսքով։

ՎԱՐԴԱՆ ԲՆՆՅԱՆ, ԱՐՄԱՆԵԱՆ

6 Յուլիս 1911 խառնեղ

ԼՊԻՇ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԷՄ

Բարիգի Բաղաքապետական Ժողովը, Մ. Մարտէլ Հապէթի կորովի մէկ ճառէն հտըր, միաձայնութեամբ հետեւեալ բանաձեւը քուէարկած է.— «Ժողովս, նկատելով որ անհրաժեշտ է խիստ միջոցներ ձեռք առնել լպիրշ, անբարոյական հրատարակութիւններու, առարկաներու եւ տեսարաններու ներկայացման, ցուցադրութեան, եւ խանութներու մէջ թէ չըջուէն վաճառորդներու միջոցաւ ծախուելուն դէմ, վստահ է Սէնի կառավարիչին եւ ոստիկանապետին կորովին վրայ, իրենց տրամադրութեան տակ գտնուած զէնքերով կոռուելու ատոնց դէմ։ Միեւնոյն ատեն բաղձանք կը յայտնէ որ հանրային իշխանութիւնները խստիւ գործադրեն արդէն գոյութիւն ունեցող օրէնքները, եւ հնար եղածին չափ շուտով՝ Խորհրդարանին կողմէ քննուին հանրային բարոյականին դէմ եղած թշնամանքները զապելու ծառայող օրինագիծերը»։

ՀՈԳԻՒՆ ԳՈՅՈՒԹԻՒՆՆ ԵՒ ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆԸ

ՀՈԳԵՊԱՇՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՆԻԹԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ

ԴԷՄ ԴԻՄԱՅ (1)

Բ.

Իրա՞ն մարմինը քնար մըն է, հոգին անոր երաժշտութիւնը. — Բնութիւնական փորձեր. — Պրատն Սէքսպիգի գլխատուած շունը:

Լիւզրէս(2), Լատին բանաստեղծ, Եւպիկուրոսի աշակերտ եւ երգիչ հին նիւթապաշտութիւնէ ներշնչուած, իր քանի մը նշանաւոր բանաստեղծութիւններուն մէջ կը ներկայացնէ նիւթապաշտական հետեւեալ փաստերը. «Կը տեսնուի որ, կ'ըսէ ան, մարմինն ու հոգին միասին կը ծնին, կը մեծնան եւ կը ստանան կարողութիւններ. միեւնոյն ժամանակ կը հասնին չափահասութեան, կը տկարանան միահաղոյն եւ կը զոռամին եւ վերջապէս կը կորսուին ինչպէ՜ս որ մանուկները կերթան զողզոջելով իրենց սրունքներուն վրայ եւ զժուարութեամբ կը քաշեն, նոյն չափով թոթովախօս կ'ըլլան եւ իրենց միտքը անորոշ է: Երբ մարմինը արթունքի կը հասնի, միտքն ալ հաստատուն ու վճռական կ'ըլլայ, եւ մտաւորական ու բարոյական հասունութիւնը կը զուգակիւ մարմնական հասունութեան հետ. յետոյ, երբ ծերուկը կը սկսի գողգոջել մանուկի մը պէս, կը վերադառնայ մանկութեան թէ՛ հոգեպէս եւ թէ՛ մարմնապէս, այնպէս որ մարմինն ու հոգին կ'անհետին միասին, հոգին՝ մուխի մը պէս կ'ելլէ կերթայ օդին մէջ»:

Այս փաստը ուրիշ կողմէ անսահման ընդլայնումներու ընդունակ է. Դիտել կը տրուի թէ իմացական եւ բարոյական ընդունակութիւնները կը փոխուին սեռի, խառնուածքի եւ առողջական վիճակի հետ, վերջապէս ամէն ինչ՝ միջավայրի,

կլիմայի, սնեղառութեան եւ մէկ խօսքով քնական ուղղակեւոր անմիջական ազդեցութեան տակ է: Մեր միտքը, կ'ըսեն, կը սահմանուի բնախօսական արտաքին եւ ներքին միջավայրի, ջղային յօրինուածութեան, արեւոյն չլջանի, անդառութեան, շնչառութեան եւն. միջոցաւ:

Այս փաստին եզրակացութիւնը կը գտնուի արդէն Սոկրատի (1) Լը Ֆէտօն (le Phédon) անուն գրքին մէջ: Մարմինը քնար մըն է, հոգին անոր երաժշտութիւնը, ըսել կուտայ Պլատոն խօսակիցներէն մէկուն Երբ քնարը կը կոտորի, երաժշտութիւնը կ'անյայտանայ. հոգին՝ ըլլալով մարմինն մէջ գտնուած հիւլէներու եւ գործարաններու կարգաւորութեան հարկաւոր եւ մեքենական մէկ արգասիքը. երբ կարգաւորութիւնը կը խանգարուի՝ հոգին կը ջնջուի:

Պատասխան. — Ընդունինք այս բոլոր իրողութիւնները առանց վիճաբանութեան. ասկէ դատ՝ թէ անոնք ճշմարիտ են ամբողջութեամբ: Բաւական է միայն զիտել տալ որ եթէ մարմինը մտքին գործիքը կամ գործարանն ըլլար (ինչպէս ստոյգ է եւ զոր կը պնդեն հոգեպաշտները) եւ ոչ նոյն իսկ անոր սրտածառը, այն առեւն ա՛մէն ինչ միեւնոյն ճշտութեամբ պիտի կատարուէր: Պիտի ըսուէր սառիւթ թէ հոգեպաշտութիւնը ուրանալ է նիւթակականին եւ բարոյականին՝ իրարու հետ ունեցած անձուկ յարաբերութիւնները եւ փոխադարձ ազդեցութիւնը. սակայն, եթէ ան (հոգեպաշտութիւնը) այդքան աննըպաստ հոգի մը վրայ կը տեղաւորուի, իր կործանումը անխուսափելի կ'ըլլայ. ուստի ան պիտի զգուշանայ այդպիսի բան մը ընելէ, եթէ քիչ մը լուսամիտ է: Մէջ բերուած իրողութիւնները ո՛չ մէկէն կ'ուերաց-

(1) Մեծ իմաստասէր Յոյն (470-400 Ք. Ա.): Առաջինը՝ որ խօսեցաւ հոգւոյ անմահութեան եւ նախախնամութեան վրայ:

Ֆէտոն աշակերտն էր Սոկրատի. Պլատոն որ Սոկրատի իմաստասիրական վարդապետութիւնները գրի առաւ, «Ֆէտոնը» անունով գիրք մըն ալ շինեց, տրամախօսական ձեւով, որուն մէջ Սոկրատ իր վարդապետութիւնները կը պարզէ ուրիշներու բերնով:

(1) Շարունակութիւն 27րդ թիւէն

(2) Մեծագոյն Լատին բանաստեղծ՝ Վիրգիլիոսի հետ, (ծն. 95 Ք. Ա.):

ուին, եւ յայտնի է թէ ինչ որ հոգեպաշտ-
ները «հոգի եւ իր կարողութիւնները» կը
կոչեն, անիկա կապուած է մարմնին, թէ՛
ըստ Պօսիւէի խօսքին, «մարդն է միայն եւ
մանաւանդ բոլորովին գործարանական»
Ըսենք նաեւ Ս. Թումասի հետ թէ «մարդ
չի կրնար մանուկի մը պէս երեւակայել
հոգին՝ մարմնին մէջ ափսոս, ինչպէս է
նաւազը՝ նաւուն, թռչունը՝ վանդակին մէջ»
Անձուկ կապ մը, ներքին միութիւն մը կայ
հոգիին եւ մարմնին միջեւ, զոր ոչ մէկ ը-
մաստասէր կը ժխտէ։ Սակայն երբ մէկը գոր-
ծիք մը կը շարժէ ունէ գործ մը կատա-
րելու համար, գործիքին հետ նոյնպէս յա-
րաբերութեան մէջ է, եւ մինչեւ որչափ
կէտ մը միայն անկախ է. ուստի կը պա-
տահի որ սխալի գործիքին հետեւելով, եւ
չստ ճշմարիտ է թէ գործիքը չէ որ կը
յարմարի, կը շարժի, արուեստագիտական
յուզմունքներ կ'ունենայ եւ կը տեսէ ինք-
նակամօրէն այն գործնական վախճանե-
րուն որուն տրամագրուած է արուեստա-
գէտը հանելու։ Ապա ուրեմն ամէն ինչ
պիտի կատարուէր միեւնոյն կերպով, եթէ
մարմինը ընկերն ու գործիքը ըլլար բա-
րոյական կեանքին՝ այս աշխարհի մէջ։
Այս է ահա զոր կը հաստատէ հոգեպաշտ-
ներուն բնաբանը։

Հիմա, կրնանք տյեղս պատասխանել
մանրամասնօրէն բոլոր կէտերուն վրայ, եւ
ետ մղել տալ գոնէ նիւթապաշտներուն
պնդումները։

Կրնարու կողմէ ի հանդէս եկած դիւ-
ցազնային քաջարտութեան վսեմագոյն
օրինակները, եւ այրերու կողմէ ցոյց տըր-
ուած վատութեան ու թույլամորթութեան
բազմաթիւ դէպքերը կ'ապացուցանեն թէ
սեռը չունի այնքան առաւելանշիւ ազդե-
ցութիւն մը։ Քիմիական մէկ սեռին վե-
րագրուած առաքինութիւնները ո՛չ արգի-
ւած են միւսին, ո՛չ ալ նոյն իսկ խիստ
հազուադէպ են միւսին մէջ։

Խառնուածքին ազդեցութիւնը բարո-
յականին վրայ ալ միեւնոյն կերպով կը
սահմանուի. տկար խառնուածքով երբեմն
մարդիկ հրաշքներ կը գործեն, ինչպէս մեծ
արուեստագէտներ սքանչելիքներ կ'ար-

տադրեն յոռի գործիքներով։ Կարելի չէ՝
միթէ տկար մարմնով մը ըլլալ կորովի,
աշխատութեան մէջ արի եւ նոյն իսկ
հանճարեղ մարդ, եւ գեղեցիկ մարմնով
մըն ալ՝ վատողի եւ վատասիրտ Միտքեր-
նիդ բերէք անդամ մը Յուդիթը, Տրդատն
ու Հոփսիմէն, Ռիչլիէօն(1), Բասգալը (2),
Վոլֆարկը (3)։

Կլիմայի ազդեցութիւնը խիստ ընդհա-
նուր եղանակով մը միայն ճշմարիտ է եւ,
ամէն բանէ յետոյ, յոյժ մակերեւութային։
Այսպէս, կը պնդեն, եւ այս ոչ առանց
իրաւունքի, թէ ցուրտ կլիմաները աւելի
նպաստաւոր են գործունէութեան ու աշ-
խօթի աշուհանդերձ այս միեւնոյն կլի-
մաները առաջ կը բերեն մեղմազճութիւն
եւ ձանձրախաւ հարաւային բնակիչներու
թուումը։ Թուլութիւնը հանրածանօթ է, սա-
կայն այս կարծեցեալ թուլամորթութիւնը
արգիլած չէ Հռոմայեցիները որ նուաճեն
աշխարհը, ինչպէս նաեւ Կարքեդոնացիները
որոնք կը զլանային կայսրութիւնը
Հռոմայեցիներուն։ Կարճ ըսելով, նիւթա-
պաշտներու կողմէ մէջ բերուած իրողու-
թիւններու մէջ անկարելի կ'ըլլայ գտնել
բացարձակ ճշմարտութիւններ. ամենք,
ինչպէս ըսինք, ընդհանուր եղանակով մը
միայն ճշմարիտ են, եւ չեն կրնար ոչ ինչ
հաստատել ուժգնօրէն։

Ամէն պարագայի մէջ, կը մոռնան տիե-
զերական ուրիշ իրողութիւններ ալ, քա-
րոյականին ազդեցութիւնը նիւթականին
վրայ, ազդեցութիւն՝ զոր մարդ հազիւ
կրնայ չափազանցել։ Մեր ունեցած առող-
ջութիւնը՝ մասամբ միայն կը չինէ մեր
նկարագիրը, սակայն մեր ունեցած նկա-
րագիրը կը ներգործէ մեր առողջութեան
վրայ։ Մեծ երկիւղ մը, բարոյական մեծ
յուզում մը կրնան զայն տակն ու վրայ

(1) Լատին եկեղեցական, ամենէն մեծ պետական
մարդը՝ որ Ֆրանսան ուզածին պէս կը շարժէր,
ունէր մտաւորական բարձր հանճար եւ վարչական
անօրինակ տաղանդ (1585-1642)։

(2) Իմաստասէր Ֆրանսացի (1623-1662), հրա-
շալի հանճար. դեռ 16 տարեկան՝ գրեց իր «Section
Conique»-ը. մեռաւ 39 տարեկան, մեծ փիլիսոփայի
անուն ճողով։

(3) Բարոյագէտ ֆրանսացի (1715-1747)

ընել եւ վտանգի ենթարկել, խիստ կենդանի յոյս մը կրնայ չատ անգամ զայն վերակենդանացնել: Հազուադիւրս չեն օրինակները այն հրաշալիքներուն, զորս բարոյական կորույժը կրցած է երեւան հանել պատերազմի դաշտին վրայ վերաւորուած կամ երկար տառապանքներով մաշուած մարմնի մը մէջ: Հետեւաբար կտրելի չէ հոգին նմանցնել ֆեարի մը երաժշտութեան. անիկա չէ անգործ եւ մեքենական ւարձաւիճ մը, ան ունի ինքնակամութիւն, ան կը ներգործէ ազդեցութիւն: Երբէք տեսնուած չէ — կ'ըսէ Պլատոն իր Ֆէտոնի գրքին մէջ — թէ երաժշտութիւնը քնար գործածէ, սակայն կը տեսնուի որ հոգին՝ մարմինը կը գործածէ. երբէք տեսնուած չէ որ ջախջախուած քնարէ մը փափկանազ երաժշտութիւն մը դուրս դայ, սակայն տեսնուած են քաջակորով հոգիներ որոնք գեղեցիկ գործեր ըրած են քայքայուած մարմնով մը:

*, Ժամանակակից նիւթապաշտութիւնը, թողլով այս հինգած եւ ուրիշ բոլոր պոռաւել կամ նուազ տկար փաստերը, մասնաւոր ձեւ մը կ'առնէ եւ կը տեղաւորուի աւելի անձուկ կալուածի մը վրայ: Միտքը, կ'ըսէ ան, ուղեղէն կախեալ է, անիկա ուղեղային գործունէութեան արգասիքն է, ճիշտ այնպէս ինչպէս մարտղով թիւնը, շնչառութիւնն եւ հիւթանջատութիւնն ալ ստամոքսէն, թոքերէն եւ զեղձերէն կախեալ են:

Բայց ինչ է ստուգիւ ուղեղին յատկութիւնը որ մտքին յատկութեան ու մեծութեանը կապուած է: Կարգ մը նիւթապաշտներ մեզ կը մատնանշին մի միակ յատկութիւն՝ ուրիշ չատերու հետ միասին: Այս է՝ ուղեղին ծաւալը, ծանրութիւնը, ձեւը, եւ տարաբանական յօրինուածքը. ասկէ զատ՝ իր բարեխառնութիւնը, կրած ճնշումը, զինք չըջապատող արեան փառակն ու որակը: Քննենք կարգաւ այս հաստատունները:

Ճշմարիտ է որ ուղեղը, էական գործարան ի մէջ բազմաց, կը ծառայէ քանի մը բաներու, եւ մասնաւորապէս թէ անիկա մտքին գործարանն է. ոչ ոք զայն

կ'ուրանայ: Բնաւ զարմանայի չէ որ ուղեղն ունենայ իր ծաւալը, իր ծանրութիւնը, իր տարաբանական յօրինուածքը: Այսուհանդերձ, զիտական ճշտութեան մը համեմուտ համար այս զանազան կէտերու վրայ մինչեւ հիմա եղած բոլոր նախափորձերը վերջ գտած չեն գրեթէ: Դժուար է չափել ուղեղին ծաւալը կենդանի էակի մը վրայ, ոչ ալ հերային մորթին եւ ոսկրներուն ճիշտ թանձրութիւնը կը ճանչցուի: Էակին մահէն առաջ կարելի չէ հետամուտ ըլլալ ուղեղին մանրամասն ուսումնասիրութեան. այս դիտողութիւնը կը կատարուի բաւական հազուադիւրսէն, ինչ որ ստոյգ կ'երեւի, այն է թէ որոշ ծաւալէ մը վար եղող ուղեղը անկարող է խորհելու, եւ թէ՛ ի հակառակէն՝ որոշ ծաւալէ մը անցնող ուղեղն ալ կը զուգահիւսի թթմամտութեան: Նոյնպէս է նաեւ ծանրութեան համար. այն ներուզանկը (encéphale) որ հաղիւ հազար կրամ կը կշռէ, կը վերաբերի ապուշի մը, մեծ մարդոց ուղեղը կը կշռէ 4 լիբրէն աւելի: Ուղեղային թթմակներու ձեւը, իրենց առաջակողման մեծ ընդլայնումը, կ'երեւի թէ կապ ունի մտքի ընտիր յատկութեան հետ: Կ'աւելցնեն թէ մտաւորական աշխատութիւնը չի քալեր ստանց լուսածնի (phosphore) մեծ սպտուկի մը. այնպէս որ միտքը՝ ամէն բանէ առաջ՝ լուսածնային ցրում մը պիտի ըլլար. եւ լուսածնային մանրեղէնները ուրիշ ամէն մանրեղէններէ աւելի յարմար պիտի ըլլային պահպանելու համար մատուցական աշխատութիւնը:

Պ. Բօլ Ժանէ (1) ժամանակակից նիւթապաշտութեան վրայ իր գրքին մէջ, ջանացած է իրողութիւնները իրողութիւններու դէմ հանելու, ցոյց տալու համար փորձերուն անբաւականութիւնը եւ պատասխանելու համար բոլոր այս կէտերու մասին: Առանց մանկելու իր պատասխաններու մանրամասնութեան մէջ, կարելի է ըսել իրեն հետ թէ բնախօսները՝ միտքը եւ իր գործերը ուղեղին միջոցաւ բացատ-

(1) Ժամանակակից իմաստասէր ֆրանսացի, ունի շատ երկեր:

ՀԱՅ ՔԱՀԱՆԱՅՈՒԹԻՒՆԸ


րել պնդելէ առաջ, լաւ կ'ընէին եթէ հա-
մաձայնէին իրարու հետ այս գործարանին՝
մինչեւ հիմա անձանօթ մնացած յօրին-
ուածութեան եւ պաշտօններուն վրայ:

Կ'երևի որ ապացուցուած է թէ ուղեղին
բարեխառնութիւնը կը բարձրանայ մտա-
ւորական աշխատութեան պահուն, թէ
անբաւական կամ չափազանց ճնշում մը
կը յուզէ միտքը: Գլխատուած շան նշա-
նաւոր փորձը՝ կատարուած Պրառն Սէ-
գարդի (1) կողմէ, կ'ապացուցանէ յստա-
կօրէն թէ հոգեբանական գիտակցական
գործողութիւնները կապուած են ուղեղին
մէջ գտնուած չնչիրակային արեան ներ-
կայութեան հետ: Շունի մը գլուխը՝ մարմ-
նէն զատուած, կը վերսկսի կենդանու-
թեան եւ իմացականութեան նշաններ գոյց
տալ, երբ կարմիր արիւն կը ներարկեն ու-
ղեղը ռոտգող չնչերակներուն մէջ: Սակայն,
այս վերջին կէտի մասին գիտուն մ'է որ
մեզի կը հայթայթէ պատասխանը: Հե-
ռագրին մէջ, կ'ըսէ Մէյէր (2) Գերմանացի
բնագէտը, բարդը (pile) կարեւոր է, եւ
բարդին մէջ թթուութեւն հանեցէք թրթ-
ուութեւն եւ ձեր միտքը չի փոխադրուի
այլ եւս: Ասոր համար կրնա՞յ ըսուիլ թէ
թթուութեան է որ կը կամի, որ կը խորհի,
որ կ'ամբիօփէ, եւ կը զրկէ արագաշու-
րը. — Այ՛, յայտնի է թէ թթուութեւն պար-
զապէս մտքին արողայտուելուն մէկ
պայմանն է: Լաւ ուրեմն, մտքին ալ ար-
տայայտուելուն համար՝ արեան՝ ջրային
աբրերը ռոտղելէն եւ առանց կարգ մը
կանոնաւոր պայմաններու անոր երեւան
չգալէն չի հետեւիր թէ մտքին նոյն իսկ
ենթական եւ պատճառը արիւնն է կամ
ուրիշ ոեւէ նիւթական պայման:

Թրգմ. Ֆրանս. Գ. Բ. ԷՕԼՄԷՉԵԱՆ
(Շարունակելի)

(1) Ժամանակակից գիտուն՝ Ամբրիկա ծնած այլ
Ֆրանսա հաստատուած:

(2) Ժամանակակից բնագէտ Գերմանացի:



Ընթերցողները գիտեն որ Թերթիս տնօրէն-նրմ-
բագիրը, հակառակ քահանայ մը ըլլալուն
ի՛նքն ալ, ամէնէն կծու քննադատողն եղած
է Հայ քահանայութեան, գուցէ վշտացնելով
շատ մը կարգակից եղբայրներ, եւ սիրով
հիւրընկալած է աշխատակիցներու կողմէ
եւս զրկուած քննադատութիւններ: Բայց
ամէն շքադրամ երկո՛ւ կողմ կ'ունենայ,
եւ կ'արժէ որ միւս կողմն ալ ի նկատ առ-
նուի: Պէտք է ըսել որ Հայ քահանայութիւնը
բարձրացնելու համար ո՛չ Հոգեւոր Իշխա-
նութիւնը եւ ոչ ալ ժողովուրդը անհրաժեշտ
հոգածութիւնը նուիրած չեն, եւ անոնց կա-
րողագոյններն եւ արժանաւորագոյններն իսկ
նիւթական եւ քարոյական դժգոհանքի բազ-
մադիմի պատճառներ կ'ունենան: Ահաւասիկ
նմոյշ մը՝ դժբախտ քահանայութեան ցուե-
րուն, զոր բաւական ժամանակ առաջ ուղ-
ղած էր մեզ՝ մերձաւոր գաւառի մը մէջ
պաշտօնավարող քահանայ մը, դժբախտ
բառին կատարեալ իմաստով, որուն նման-
ները քիչ չեն գաւառներու եւ նոյն իսկ Պոլ-
սոյ մէջ: Առանց համամիտ գտնուելու մաս-
նաւորապէս Առաջնորդներու համար յայտ-
նուած դժգոհանքներուն, որոնք բնականա-
բար չեն կրնար տարածուիլ ամէն Առաջնոր-
դի վրայ հաւասարապէս, պէտք է ըսենք որ
տխուր եւ շատ իրական պատկեր մըն է
Արժ. Տ. Հօր գծածը, զոր կը ներկայացնենք
իր բնական վիճակին մէջ՝ ժողովուրդին Թէ
Ազգ. իշխանութեան ուշադրութեան:

Պիտի փափարէինք որ քահանաներու նիւթական
եւ իմացական վիճակին բարւոյքման հալցին
վրայ, — իրրեւ առաջին հրատապ կէտը Հայ
եկեղեցւոյ բարեկարգութեան — Պատ աշ-
խատակիցներ գրէին իրենց Թեր ու Թէմ
կարծիքները, որոնց հրատարակումէն ետքը,
թերթիս խմբագիրը պիտի սկսէր իր հա-
մատ տեսութիւնը:

Արդէն յայտնի է քահանայից նիւ-
թականը որ այսօր շատ ցաւալի վիճակ
մը ունի. հովուական ցուպը ձեռքս, ասդին
տնդին թափառելով օրական ապրուստս
ճարել ստիպուեցայ Շնորհաւորելի էր թեր-
թերու մէջ յուզուիլը եկեղեցական բարե-
կարգութեան խնդրին, որ չդիտեմ ո՛ւր
մնաց. բաղմաթիւ անձեր փրկուելով ե-
րախտապարտ սիւտի մնային:

Ահա՛ երկատողով մը վերջին ծայր ունձ-
կութիւնս կը բացատրեմ ձեզի. — Վեց տա-

րի քահանայութեան միջոցին մինակ երկու տարի անհոգ ատեն անցընելով պաշտօնին վրայ կեցած էի. երրորդ տարին երէցկիւնս հիւանդանալով՝ երկու անգամ Կ. Պոլիս եւ ուրիշ մերձակայ քաղաքներ գացի, բայց ուէ օգուտ չտեսնուելով, վերջապէս 1908 Փետր.ին հոլը յանձնեցինք՝ ձգելով վեց պզտիկ զաւակներ որոնց մէկը մէկ ու կէս տարեկան մեռաւ. երկու տարի միջոցին 60 օսմ. ոսկիէ աւելի պարտական մնալով՝ եւ օրէ օր քահանայական իրաւունքներու հին զրուծիւնները տկարանալով՝ Բաղ. Ժողովի, Վիճակիս Առաջնորդին, Թաղ. Խորհուրդին աղերսագիրներով քանիցս զիմեցի, փուլ մը օգուտ չեղաւ:

Հուսկ ուրեմն տնական կահ կարասիներս ծախելով՝ հինգ օր ճամբորդութիւն ըրի, եւ հաստատուեցայ Ա. . . քաղաքի եկեղեցին, նոյն Վիճակին բարեխնամ առաջնորդ Ս. Հօր հոգածութեամբ: Հիմա չոր հացի կտոր մը գտնելով, հինգ խեղճ զաւակներու հետ դաղթականի պէս տուն մը վարձելով մերկ սննհակին մէջ Աստուծոյ փառք տալով օրերս կ'անցունեմ: Ձգէ՛ թերթ կարդալը՝ զիրք մը առնելով կարգալու կարօտութիւնը կը քաշեմ: Ասանձ մի՛ արասցէ, եթէ այսօր մեռնիմ՝ սա խեղճ հինգ զաւակներուս վիճակը ի՞նչ պիտի ըլլայ, կա՛մ պիտի մտրան եւ կամ հարուսաներու տունը ափ առնելով ծառայութիւն պիտի ընեն: Ահա՛ քահանայից ապագան: Ասկէ աւելի զժախատութիւն չ'ուր: Միակ միջոցը պիտի ըլլար սքեմը ձգել եւ քաշուիլ պաշտօնէ: Վա՛խ. . . , վա՛խ, խեղճ ու կրակ քահանաներուն, որոնցմէ հարիւրաւորներ այսօր կը թափառին աչքի առջեւ: Այսօր չկայ շրջուն քնիւ մը որ օրը օրին իր տեսածները տեղեկագրէ Պատկ. Կրօն. Ժողովին: Ձեր Արժանապատուութիւնը պիտի ըսէ որ Առաջնորդներ ունիք: Առաջնորդները՝ բացառութեամբ՝ իրենց քաղկները պարարտացնելով հպիսկոպոսանալու հովիւ կ'առնեն, եւ ժողովուրդին հարուստ կողմը սիրաշահելով, աղքատիկ ժողովուրդին իրենց քահանայից հետ՝ ձայները անխելի

կը մնան: Ասոնք լեցուն ամսականներ ստանալով, եւ իրենց քահանայութիւն համեմատ քահանաները դատապարտելով ժամանակ կ'անցընեն. ընտանեկան զգացումը կը պակսի իրենց, եւ ու է ծախք չունին: Վիճակ մը այցելութեան ժամանակ, կառքի եւ կամ ուրիշ ծախքերը եկեղեցւոյ մնաւակէն կը հոգացուին, իսկ եթէ քահանաները մանկոր մը ուզեն՝ Առաջնորդ Ս. Հայրերը Թաղ. Խորհուրդներու ընդունելու արտօնութիւն չեն տար: Ասոնց բուն ըրածը այսչափ է, ուրիշ ոչինչ:

Ասոնք գրելով աչ թէ գանգատիլ կ'ուզեմ, այլ ձեր պատուական թերթին մէջ՝ քահանայից արժանապատուութիւնը, ապրուստը եւ դիրքը ապահովելու համար կարեւոր յօդուածներ հրատարակելիք կը խնդրեմ:

Միամաղթակից եւ վշտակիր
եղբայրներդ

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՎԵՐԱԲՆՆՈՒԹԻՒՆ ԱՆԿԼԻԲԱՆ

ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻՆ

Անգլիոյ մէջ երկար առնէն ի վեր կը խորհուի ժառնագիրի վերաքննութեան վրայ: Քէնզըրպըրի մէջ ներկայ Յուլիս ամսուն պումարուած Եկեղց. Ժողով մը այդ իմաստով որոշում մը քուէարկեց, բայց իր այդ քուէարկութիւնն առժամայ հանդամանք ունի, որովհետեւ Եօքքի նահանգին Եկեղց. Ժողովն ալ միեւնոյն խնդիրն ունի իր օրակարգին վրայ: Երկու նահանգներու ժողովները համամասն որոշումներ պիտի տան, երկու հպիսկոպոսներու (Քէնզըրպըրի եւ Եօքքի) կողմէ անուանուած Մանագիտական Յանձնաժողովի մը կարծիքն առնուելէ ետքը: Ի մէջ այլոց կը խորհուի առտուան եւ իրիկսւան եւ ուրիշ նոր աղօթքներ աւելցնել, սրբադրութիւններ մացնել մաղթանքներուն մէջ, եւ հոգեհանգստեան պաշտամունքի մէջ՝ նոր բանաձեւեր, ժո-

ղովը մասնաւորապէս զբաղեցաւ Պապի արարողութեամբ, մեղմացելու համար կարգ մը հատուածներ, որոնք քիչ մը չափազանց իրապաշտ կ'երեւան նոր ճաշակներու համար:

ԳԵՐՄԱՆ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ ՀՈՌՄԻ ՄԷՋ

Յուլիս ամսոյ սկիզբը հիմնարկէքը կատարուեցաւ գերմանական նոր եկեղեցիի մը՝ Հոռմի մէջ, կը նախադասէր գերման գետականատան երէցը, Հանդէսին ներկայ գտնուելու հրաւիրուած էին Գերմանիոյ նախկին վարչապետ Պիլլով իշխան, ինչպէս նաեւ Հոռմի Բողոք. ուրիշ եկեղեցիներու ներկայացուցիչներ, Այս գործին նախաձեռնութիւնն ունեցողներու նպատակն եղած է հաստատել կենսունակութիւնը բողոքական եկեղեցւոյն, որուն մահազանգն հնչեցնել կ'ուզէ Պապականութիւնը:

«ՊԱՊԻՆ ՊԱՇՏԱՆՔԸ»

Հոռմեական եկեղեցական մը՝ Ա. Փ. Միլէ, զբաղի մը հրատարակելու է վերջերս, վերոյիշեալ խորագրով: Ըստ նոյն հեղինակին, անհրաժեշտ է առանց ունէ վերապահութեան ընդունիլ Պապին ուսուցումները: «Պապը, կ'ըսէ, ամէնէն նուիրական վարձապետական հեղինակութիւնն է, ամէնէն անվիճելին, ամէնէն արժանաւորը մեր յարգանքին Պապը չէ այլ ինչ, եթէ ոչ ձայնաւոր փողը մեր Տիրոջ, կերպով մը չըթուեն իսկ է Յիսուսին: Պապութեան միջոցաւ Քրիստոս կը բնակի մարդոց մէջ: Աստուածային Բանը կը խօսի աշխարհի, իր փոխանորդին բերանով, ինչ անունով ալ կոչուի ան, Պատրիարք, ըլլայ անունը, Պիոս Թ., Լեոն ԺԳ., կամ Պիոս Ժ.: Քիչ մը անդին հեղինակը կ'աւելցնէ. «Ամէն պարագայի մէջ, մենք պարտաւոր ենք բացարձակ վստահութիւն ունենալ Պապին Պէտք է խոստովանինք թէ իր վարդապետական հեղինակութիւնը, նուիրական, աստուածային հեղինակութիւնն ունի է, հետեւապէս պարտաւոր ենք մեր հոգիներու այս Հօրը մօտիկ ընել՝ գործաւոր, խոնարհ զաւկի մը հպատակութեամբը՝ վերջապէս, Հոռմի նախնիք, գոր-

ծենք, դառնք ու խօսինք Հոռմի նման» Բրոֆ. Տումէրկ, այս զբաղիին վրայ խօսելով՝ շատ իրաւամբ կը հարցնէ. — «Ո՞ր կը մնայ ուրեմն Ս. Գրքը, ինչ կ'ըլլայ Աւետարանը, ԺՁ. դարու մեր հայրերը իրաւամբ կ'անջատէին Պապակաները՝ Աւետարանականներէն: Այսօր այդ անջատումը կը շեշտուի եւ արժէք կը ստանայ առաւել քան երբեք»:

ՊԱՄՓԻԼԻՈՍ ԵՒ ՅՈՒԼԻՈՍ

ԱՌԱՋԻՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒ

ԺԱՄԱՆԱԿՈՒԱՆ ՊԱՍՏՈՒԹԻՒՆ(1)

Գ.

— Լա՛ւ կշռեցէք ըսելիքս, ըսաւ Յուլիոսի խօսակիցը՝ շարունակելով: Մեր հաւատքն այն է թէ տիեզերքը կը պահպանուի աստուածներուն կողմէ, որոնք հսկին մարդոց վրայ, մարդիկ, լաւ ապրելու համար, պարտաւոր են պատուել աստուածները, ու փնտռել ճշմարտութիւնն եւ արդարութիւնը: Մեր կեանքը կը կառավարուի մէկ կողմէ աստուածներու կամքովը, Ու միւս կողմէ մարդկային ազդիւն հաւաքական իմաստութեամբը: Կ'ապրինք, կը խորհինք, կը փնտռենք եւ հետեւապէս կը յառաջանանք դէպի ճշմարտութիւնը: Անոնք՝ ընդհակառակն՝ աստուածներ չունին, ոչ ալ մարդկային իմաստութիւն, որուն կարենային կոչում ընել: Բայց կրցածնուն լաւագոյնը կ'ընեն, կոյր հաւատքով մը՝ խաչուած տիրոջ մը վրայ, համոզուելով ըստ այն բաներուն զոր ան սորվեցուցած է իրենց, Հիմա, դուք որոշեցէք թէ ո՞րն է որ պիտի կարենայ զմեզ աւելի ապահով կերպով առաջնորդել: Աստուածներուն կամքը, եւ ամբողջ մարդկութեան գործունէութիւնն եւ իմաստութիւնը, թէ կոյր եւ բանականութեան հակառակ հաւատքը միակ մարդու մը խօսքին:

Օտարականին գիտողութիւնները, մանաւանդ վերջինը, ազդեցին Յուլիոսի

(1) Շարունակութիւն 22րդ թիւէն սկսեալ:

վրայ Ոչ միայն խախտեցաւ Քրիստոնէ-
ութիւնն ընդունելու իր որոշումը. այլեւ
անհաւատալի կը թուէր իրեն որ տարա-
պայման դժբախտութիւնը կրցած էր զինքը
մղելու այդ աստիճան մեծ յիմարութեան:

Ուրիշ խնդիր մը կար սակայն որ
լուծուած չէր. ինչ պիտի ընէր իմա,
ազատուելու համար այն դժուար վիճա-
կէն որ զինքն այսպէս յուսահատութեան
մղած էր: Այս խնդիրն ալ օտարականին
ներկայացուց եւ անոր կարծիքն ուզեց.

— Ես ալ ճիշտ ատոր վրայ պիտի
խօսէի, պատասխանեց այս վերջինը. Ինչ
պիտի ընէք, կատարելապէս յստակ եւ որոշ
կը թուի այն ընթացքը որուն պէտք է
հետեւիք, որքան որ գոնէ՝ մարդկային
իմաստութիւնը կը թելադրէ ինձ. Ձեր
կիրքերն են աղբիւրը ձեր բոլոր վիշտե-
րուն: Անոնք դուրս հանած են զձեզ շի-
տակ ճամբէն եւ մեծ տառապանքներու
ենթարկած: Կեանքի փորձառութիւնն ու-
րիշ կերպով ձեռք չի բերուիլ: Սորվեցէք,
եւ օգտակարապէս կիրարկեցէք սորված-
նքդ: Սրդէն շատ տաղնապներու ենթալ-
կուած էք, եւ կրնաք առանց խաբուելու
սրտիկ քաղցր եւ դառն բաներու Օգտուե-
ցէք ձեր փորձառութիւնէն: Ձեզ ամենէն
աւելի շփոթեցնողը ձեր հօր նկատմամբ
զգացած հակակրօթիւննիդ է. ասիկա
յառաջ կուգայ ձեր ունեցած այժմու գիւ-
քէն: Փոխեցէք ձեր կացութիւնը, եւ այդ
ատելութիւնը պիտի անհետանայ կամ
գոնէ նուազ զգալի պիտի ընէ իր խայ-
թոյնէրը: Ձեր դժբախտութիւններն անկէ
առաջ կուգան որ չէք դիտցած ժամանա-
կին կանգ առնել: Երիտասարդութեան
բոլոր հաճոյքներուն անձնատուր եղած
էք, ինչ որ շատ բնական է, բայց ատոր
եղանակն անցնելէ ետքը շարունակած
էք սակաւին, ինչ որ սխալ մըն է:

Հայրերնիդ կ'առաջարկէ ձեզ որ ա-
մուսնանաք. իմաստուն խորհուրդ մըն է
այդ: Ձեր կեանքի մէկ շրջանը — երիտա-
սարդութիւնը — վերջացած է, եւ հիմակ
ուրիշ շրջանի մը կ'անցնիք: Ձեր բոլոր
մտահոգութիւնները, երկիւղները այդ
փոխանցումէն առաջ կուգան: Ճշմարտու-

թեան նայեցէք շնչաակի, եւ պիտի հա-
մոզուիք որ ձեր երիտասարդութիւնն անցած
է. ուրեմն մէկդի՝ նետեցէք բոլոր ինչ որ կը
պատկանէր ձեր կեանքի այդ շրջանին,
եւ այլ եւս առանց յապաղելու քալեցէք
այն շաւղէն որ պատշաճ է կատարեալ
մարգուն: Լիմուսնացէ՛ք, մէկդի՝ Ժողովցէք
երիտասարդութեան թեթեւ զրօսանքները.
ձեր խելքը միտքը առուտուրի, հանրային
գործերու, գիտութեանց եւ արուեստից
նուիրեցէք: Այս միջոցով պիտի հաշտուիք
նոյն իսկ ինքզինքնուդ հետ, նաեւ ձեր
հօրը եւ բարեկամներուն հետ, եւ հան-
դիսաբ պիտի գտնէք երջանկութեան
մէջ:

Եթէ կը կարծէք որ մեկուսացումն եւ
առանձնութիւնը զոր Քրիստոնեաներուն
քով վնասել կ'երթայիք, կրնան տակաւին
հրապոյրներ ունենալ ձեզի համար, եթէ
փիլիսոփայութեան ուսումը հանրային
կեանքի գործունէութեանն աւելի հրա-
պոյրներ կրնայ ունենալ ձեզի համար,
այդ պարագային՝ կրնաք ձեր երեւակայու-
թեան թուի տալ ձեզին պատասաւոր կերպով
այն պայմանաւ միայն որ նախ ուսումնա-
սիրէք կեանքը եւ ճանչնաք անոր ներքին
նշանակութիւնը: Այդ ծանօթութիւնն ալ
կրնաք ձեռք բերել՝ ընտանիքի հայր եւ
քաղաքացի ըլլալով միայն: Այդ դիրքը
ձեռք բերելէ ետքը, եթէ տակաւին հրա-
պուրուած մնաք մեծակեցողի հայեցողական
կեանքէն, այն աստեւ առանց վարանումի
կրնաք ինքզինքնիդ նուիրել ձեր հակա-
միտութեանց, որովհետեւ այն ատեն
վստահ պիտի ըլլաք թէ ատելութիւնն եւ
յուսախաբութիւնը չէ որ զձեզ ատոր կը
մղեն, ինչպէս այս վայրկեան, այլ ճշմա-
րիտ կոչում մ'ունիք անոր: Այն ատեն
կրնաք այդ ճամբուն հետեւիլ, մինչեւ
ուր որ ասնի զձեզ:

Օտարականին այս վերջին խօսքերը
յաղթեցին Յովիոսի յետին վարանում-
ներուն: Որոշումը տուած էր: Շնորհա-
կալութիւն յայտնեց օտարականին, եւ իր
տունը դարձաւ Մայրը գրկաբաց ընդու-
նեց զինքը: Հայրն ալ իմանալով որ զա-
ւակն որոշած է համակերպիլ իր բազ-

ձանքներուն եւ ամուսնանալ՝ ընտրած աղջկանը հետ, հաշտուեցաւ զաւկին հետ և՛.

Երեք ամիս ետքը կատարուեցաւ Յուլիոսի ամուսնութիւնը՝ գեղեցիկն եւլայիայի հետ, եւ երիտասարդ ամուլը գնաց հաստատուեցաւ երենց սեփական տան մը մէջ. Յուլիոսի կենցաղը արմատական փոփոխութիւն մը կրած էր: Վերսկսած էր իր հօրը առեւտրական ճիւղին հետեւիլ, եւ իր պատկանած ընկերույին դասակարգին յարգելի մէկ անգամը կը դառնար:

Օր մը, իր առուտուրին վերաբերեալ գործի մը համար կտոքով մերձակայ քաղաք մը դացած էր, երբ վաճառատան մէջ նստած պահուն, նշմարեց Պամփիլիոսը, որ դրան առջեւէն կ'անցնէր իրեն անծանօթ աղջկան մ'ընկերակցութեամբ: Երկուքն ալ խաղողի բաւական ծանր բեռներ կը կրէին, զոր կը ծախէին անցորդներուն: Յուլիոս ճանչցաւ իր բարեկամը, զորս ելաւ, անոր քովը գնաց, ըսաւ թէ շատ ուրախ է զինքը տեսնելու հաճոյքն ունենալուն համար, եւ սկսաւ տեսակցիլ հետը: Աղջիկը, տեսնելով որ Պամփիլիոս կը բաղձայ վաճառատուն մտնել, եւ գուշակելով որ կը վարանի զինքը մինակ ձգելու, ապահովցուց ընկերը թէ բնաւ պէտք չունի իր ծառայութեանց, եւ ինքը պիտի կենայ այնտեղ՝ յաճախորդներու սպասելով: Պամփիլիոս շնորհակալութիւն յայտնեց եւ ընկերացաւ: Յուլիոսի Այս վերջինը իր բարեկամ վաճառականէն թոյլատուութիւն ստանալէ ետքը առանձնացաւ ներքին սենեակ մը, իր բամբերիմին հետ ուզածին պէս խօսակցելու համար:

Այն ատեն երկու բարեկամներն սկսան խօսիլ իրենց կեանքին մէջ տեղի ունեցած զանազան փոփոխութեանց վրայ, յորմէ հետէ իրար չէին տեսած: Պամփիլիոսի կեանքը սահած էր հանդարտօրէն, առանց նիւթական փոփոխութեան: Միշտ կ'ապրէր Քրիստոնեաներու համայնքին մէջ, ամուրի մնացած էր, եւ իր բարեկամին

կը հաւաստէր թէ կը զգայ որ իւրաքանչիւր տարի, իւրաքանչիւր օր, իւրաքանչիւր ժամ նոր երջանկութիւն մը կը բերէ իրեն: Յուլիոս եւս պատմեց իր կեանքը, ըսաւ թէ ինչպէս մազ մնացեր էր Քրիստոնէութիւնն ընդունելուն, եւ պատմեց օտարականին հանդիպումը եւ անոր հետ ունեցած խօսակցութիւնը:


— Իր խորհուրդներուն հետեւեցայ եւ ամուսնացայ, ըսաւ Յուլիոս եզրակացնելով:

— Հիմա երջանիկ ես գտնէ, հարցուց Պամփիլիոս. ամուսնութեան մէջ գտա՞ր օտարականին խոստացած բոլոր առաւելութիւնները:

— Երջանիկ պատասխանեց Յուլիոս, ինչ կը նշանակէ այդ «երջանիկ» բառը: Եթէ ատով պէտք է հասկնալ մեր բաղձանքներուն կատարեալ իրականացումը, երջանիկ չեմ: Գործերս կը վարեմ բաւական յաջողութեամբ, զրացիներս կը սկսին յարգել զիս, եւ այս երկու պարագաները բաւական դոհացում կը պատճառեն ինձ: Յարաբերութիւն ունիմ ինձմէ աւելի հարուստ եւ յարգուած քաղաքացիներու հետ, եւ գրեթէ ապահով եմ որ զանոնք բոլորն ալ պիտի զերազանցեմ այդ տեսակէտներով: Այդ կողմէն կեանքս դոհացուցիչ է ուրեմն: Դալով ամուսնութեանս, անկեղծօրէն խօսելով՝ կը վախնամ որ չպիտի կրնամ նոյն բանն ըսել: Եւ աւելին պէտք է ըսեմ. կը խոստովանիմ որ այս ամուսնութիւնը, որ ուրախութիւն եւ երջանկութիւն պիտի բերէր ինձի, յուսախաբութիւն միայն պատճառեց. եւ հիմայ փոխանակ կատարեալ երջանկութեան զոր կը յուսայի, դժբախտութեան հետ դէմ առ դէմ կը գտնուիմ: Կինս պեղեցիկ է, մտացի, զարգացած եւ բացարձակապէս բարեացակամ: Եւ սակայն անհամաձայնութեան բողբոսութիւ պատճառներ ունինք: Դուն ասոնք չես հասկնար, քանի որ ամուսնացած չես:

ԼԷՈՆ ԹՈԼՍՏՈՅ

(Շարունակելի)



ՇԱԲԹՈՒԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ԱՆՇԱՆՈԹ ԳԻՒՅԱԶՆԵՐ

Ֆրանսական քերթերը հետեւեալ սր-
ճայոյց դրուագը կը պատմեն.—

Անցեալ Ապրիլ 18ին առտուան ժամը 10ին (Ը. Ե.), Պէլ-Իլ-տը-Մէռի Լօքմա-
րիա համայնքին մէջ՝ կղզիին հարաւարե-
ւելեան ծայրը գտնուող Քերտոնիսի փա-
րոսին պահնորդը յանկարծական տկարու-
թիւն մը սենցաւ, մինչ մաքրելու վրայ
էր փարոսին դարձգարձիկ լապտերը: Պահ-
նորդը վաղանցուկ անհանգստութիւն մը
կարծելով ասիկա, շարունակեց աշխատու-
թիւնը մինչեւ կէս օր: Բայց նոր եւ աւե-
լի սասաթիկ տկարութիւն մը զգալով հար-
կադրուեցաւ անկողին իյնալ: Մաղըլօ,
(այս էր իր անունը) այդ փարոսին մէջ կը
բնակէր՝ կնոջը եւ չորս հասակաւոր զա-
ւակներուն հետ: Երկու ուրիշ զաւակներ
ալ ունէր որոնք կղզին կը բնակէին: Տի-
կին Մաղըլօ, չկրնալով մինակ թողուլ իր
հիւանդ ամուսինն եւ չորս զաւակները,
չկրցաւ երթալ օգնութիւն խնդրել, եւ
հակառակ իր խնամքներուն՝ Մաղըլօի վի-
ճակն հետզհետէ ծանրացաւ: Իրիկուան
ժամը 7ին հոգեվարք ինկաւ, մահուան
անկողինին շուրջն ունենալով վախճն
ապշահար զաւակները: Բայց մութը կո-
խելու վրայ էր եւ փարոսին լոյսը վառ-
ուած չէր: Տիկին Մաղըլօ որ ճշմարիտ
գերի մըն էր պարտականութեան,՝ մահա-
մերձին սնարին մօտ թողուց զաւակները,
եւ աշտարակին մէջ մտաւ՝ ճրագը վառե-
լու: Վերադարձին հազիւ կրցաւ հասնիլ
ամուսնոյն վերջին շունչն աւանդելու
վայրկեանին: Ենթարկուած վիշտին ծան-
րութեանը մէջ, արցունքի հեղեղներու
մէջտեղ, զաւակներէն մէկը կեանքի իրա-
կանութեան վերադարձուց զայն:

— Մայրի՛կ, լապտերը չի՛ դառնար:

Եւ յիշաւ, փարոսին դարձգարձիկ լոյսը
չէր դառնար, հետեւապէս վտանգ կար որ
չփոթուի հաստատուն բաղմաթիւ: Լոյսե-
րուն հեա, եւ առաջ զայ անաւոր սխա-

լում մը՝ այս խաւար գիշերին մէջ յայտ-
դած նաւերուն հողմէ, որ փոթորիկի
սպառնալիքին տակ ալ կը դառնուէին:

Անգամ մըն ալ ելաւ անշունչ տարած-
ուող ամուսնոյն քովէն, եւ փարոսն ելնե-
լով աշխատեցաւ լապտերը շարժման մէջ
դնել: Բայց ամբողջ ժամուան մը աշխա-
տութիւնը պարապը դնաց: Մաղըլօ, առ-
տուն ենթարկուած յանկարծական հիւան-
դութեան հարուածին տակ, լապտերը
մաքրելու միջոցին չէր կրցեր բոլոր մեքի-
նաներն իրենց տեղը դնել, եւ անշարժու-
թեան մատնուած փարոսը գուցէ մէկէ
աւելի աղէտներու չարժաոթիթը պիտի
դառնար:

Այն ատեն նորէն մեռեալին քով դա-
լով, աշտարակին վրայ հանեց իր երկու
միծ զաւակները, տասը եւ եօթը տարե-
կան, եւ այդ երկու տղաքը ամբողջ գի-
շերը, միս մինակ լապտերին նեղկուկ սեն-
եակին մէջ, իրիկուան ժամ 9էն մինչեւ
առտուան ժամ 7, իրենց բոլոր ուժովը
հրելով շարունակ դարձուցին լապտերը,
որ վայրկեան մը իսկ կանգ չառաւ, մինչ
վարը մայրերնին՝ երկու պզտիկ զաւակ-
ներուն հետ միասին՝ յուզարկաւորական
վերջին արդուգարդը կուտար մեռեալին:

Մէկ քանի երեսփոխաններ խնդրագիր
տուին, որպէս զի Պատուոյ Լէգէոնի Խաչը
նուիրուի տիկին Մաղըլօի, Պէլ-Իլի փա-
րոսի պահնորդին քայարի այրին: Սպասե-
լով ատոր, Յուլիո Ծի (Ը. Ե.) կիրակին,
Բարիքի փառալերող ընկերութիւնը, իր
վարձատրութիւնները Մ. Լուպէի նա-
խագահութեամբ՝ բաժնելու միջոցին, ոսկի
չքաղքամ մը նուիրեց եւ դրամական պար-
գիւ մը տուաւ Տիկին Մաղըլօի:

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ՄՐՏԱՔԵՎՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՈՅ ՄԷՋ

Անցեալ շաբթուան աղետալի հրդեհին
հետեւանօք՝ վրդովուած Հայ սրտերը ա-
ւելի եւս մթադնեցան, երբ Ազատական
եւ յետոյ ուրիշ թերթերու մէջ կարդաց-
ուեցաւ Դ. Զօրաբանակի հրամանատար
Օսման փաշայի հիմնապէս անիրաւ եւ

գրգռիչ ճառը, գոր խօսեր է Մշոյ հաս-
գիւղին մէջ, ի պատասխան զինքը գիմա-
ւորելու գացող հայ քահանաներոյ, գիւ-
ղապետին եւն. Զինուորական բարձր
պաշտօնատարի մը, միւշիւրի մը բերնով,
այդ ճառին մէջ Հայերը կը հռչակուին
Քուրդերը զրկողներ՝ իրենց սպրուստի
միջոցներէն, կ'անուանո ինչեղափոխական-
ներ որ առանձին պետութիւն մը հիմնել
ուզած են՝ Սերպիոյ, Գարատաղի, Պուլ-
կարիոյ եւն. նման, բայց չպիտի յաջողին
թէեւ կ'աշխատին պօմպա, տինամիթ եւն.
չինելէ անհաւատարիմ կը նկատուին օսմ.
Գահին, որովհետեւ հարկադրուեցան գաղ-
թել Թուսիա, Ամերիկա կամ այլուր,
20-30 տարի անմշակ թողլով իրենց հո-
ղերը, զորս կառավարութիւնը իրաւունք
ունէր ուրիշներուն յատկացնելու «Դուք
կը պահանջէք որ, կը գոչէ միւշիւրը, Հա-
միտիէները մէջտեղէն վերցունին, լաւ,
վերցուցէք Դաշնակցականները, մենք ալ
կը վերցնենք Համիտիէները» թերթիս
անձուկ սահմանը չի ներէր ամբողջո-
թեամբ մէջ բերել այդ գրգռիչ ճառը՝ խօս-
ուած բազմաթիւ Հայերու եւ Քուրդերու
ներկայութեան՝ որ հարուած մըն է ցի-
ղային համընդհանրութեան եւ քաջալերու-
թիւն մը՝ անհանգարտ տարրերուն Սրտա-
բեկութիւնը մեծ է հայ շրջանակներու
մէջ. ու թէեւ հայ թերթեր՝ մասնաւորա-
պէս Բիւզանդիոն՝ ի վեր հանեցին այդ
արտառող ճառին պատմական ու վարչա-
կան սխալները, եւ ցուցադրեցին անոր
ձիգը՝ Համիտի արդարացիելու, անոր ոգին
ցեղային համերաշխութիւնը խանգարելու,
անոր բացարձակ անիրաւութիւնը՝ Դաշ-
նակցութիւնը Համիտիէներուն հետ կշիռ
դնելուն համար, ու պահանջեցին անոր
պաշտօնանկութիւնը: Մայրաքաղաքիս օ-
տար եւ թուրք մամուլն ալ համաձայն
գտնուեցաւ հայ թերթերուն, եւ սակայն
մեր վհատութիւնը մեծ է մանաւանդ այն
պատճառով որ Օսման փաշա իր գրգռիչ
ճառը հրատարակուելէն չարաթ մը ետքը,
տակաւին պաշտօնին վրայ կը գտնուի
Խառն ժողովը Դշի նիստին մէջ ցաւ
յայտնեց այդ նախատեսկան յայտարարու-

թեանց համար, եւ որոշեց թագբիրով մը
հաղորդել Բ. Դրան: Զգիտենք թէ ինչ
պիտի ըլլայ առօր ելքը: Գոհութեամբ
կ'արձանագրենք սակայն ներքին գործոյ
Վսեմ. նախարարին յայտարարութիւնը՝
Ժաւանակի խմբագրին, թէ Հայերուն այս
երկրին մատուցած ծառայութիւնը վեր է
ամէն գնահատութենէ, մանաւանդ Սահ-
մանագրութեան վերահաստատման համար,
եւ թէ Օսման փաշային զգացումը տաժող
մէկը չի կրնար սահմանադրական կառա-
վարութեան մէջ պաշտօն վարել: Ուստի
եթէ պաշտօնապէս հաստատուի անոր այդ
խօսքերն ըսած ըլլալը, անմիջապէս Պոլիս
պիտի կանչուի եւ բացատրութիւն պիտի
պահանջուի:

* Զինուորական ընդհ. հրամանատարի
մը մտայնութիւնն այսչափ գրգռիչ ըլլալէ
ետքը, գիւրաւ կը հասկցուի Մշոյ եւ Բա-
ղէշի կողմերը աւազակները, ոճրագործ-
ները հետապնդելու զրկուած զինուորնե-
րու մտքի վիցակը: Այն տեղերու Առաջ-
նորդներէն Պատրիարքարան հասած տեղե-
կագիրներ շատ տխուր կը ներկայացնեն
Հայերու կացութիւնը: Թէեւ Պատերազ-
մական պաշտօնատունը կը հերքէ Խոյթի
ոճրագործները հետապնդելու զրկուած
զօրքերուն իրենց պարտականութիւնը չի
կատարած ետ դառնալը, եւ կը հաւաստէ
թէ անոնք մինչեւ աշուն այնտեղ պիտի
մնան, բայց առաջնորդներու տեղեկագրե-
րուն մէջ կը հաւատուի, թէ մարդասպան-
ները ձերբակալելու համար եղած չար-
ժու. միներ սոսկ ցոյցի մը երեւոյթը ունին,
զօրաց առաջնորդելու համար քուրդ լըր-
տեաներ բռնուած են՝ մեծ մասամբ ոճրա-
գործներու եւ անոնց աղաներու արքան-
եակներէն: Մնացածը կը գուշակուի Ոճ-
րագործները ոչ միայն չեն հալածուիր,
այլեւ եթէ պատահաբար հանդիպուին,
փախցնել կը տրուին Մշոյ կողմը գտնուող
բոլոր պաշտօնեաները, զինուորական թէ
քաղաքային, Քուրդերուն համակիւր են եւ
Հայերը խիստ կ'ատեն: Տեղեկագրերը
մանրամասն դէպքեր կը պատմեն յիշուած
իրողութիւնները հաստատուելու համար:
Այս ամէնը կը ցուցնեն անհրաժեշտու-

թիւնը՝ կարուկ միջոցներ ի դորձ դնելու, անդորրութիւնը պահպանելու համար, եւ փութո՛ւմ:

* * * Գոհացուցիչ լուր մը. — վանի կառավարութիւնը կանչել տալով Շահպազի զիւղին հողատէր Հայերը, որոնք երկար ատենէ ի վեր դատ ունէին իրենց հողերը խարդախութեամբ գրաւող շէյխի մը գէմ, յայտարարեց որ իրաւունքնին շտաճ են եւ իրենք այդ հողերուն տէրն են այլեւս:

ԽԱՌՆ ԺՈՂՈՎԸ ԴՆԻ նիստին մէջ ընդունեց հրաժարականը Յակոբ Էֆ. Ստամպուլեանի, որ կրկին գրեթով իր պաշտօնին շարունակութեան անկարելիութիւնը կը յայտնէր. — Գաւառաց անդորրութեան համար պատրաստուած ծրագրին վրայ մէկ քանի նոր բարեփոխմանց համար իր անդամներէն Տ. Դր. Մ. Վ. Պալաքեան եւ Վահան Էֆ. Փափազեանի յանձնեց որոշեալ հիմանց վրայ պէտք եղած սրբազորութիւնն եւ յաւելումն ընելու Կտակաց Հոգաբարձութիւնը կազմեց, անդամ կարգելով Տ. Մաղաքիա եպ. Տէրունեան, Տ. Միքայէլ քհն. Աշտեան, Տ. Աբէլ քհն. Երէցեան եւ Սարգիս Էսմէրեան, Յակոբ Յակոբեան, Դաւիթ Տ. Մովսէսեան եւ Յր. Շահրիկեան Էֆ.ները: Դատաստանական հորհրդոյ հրաժարեալ անդամներուն տեղ անդամակցութեան կոչեց Բիւզանդ Թէրզեան եւ Դրբգոր Դառնակեան Էֆ.ները. — Հաստատեց Աղբ. Պոլսոյ եւ Կեսարիոյ Առաջն. ընտրելիաց եռանուն ցանկերը, մերժելով Տ. Գնէլ Մ. Վ.ի հրաժարականը՝ Աղբ. Պոլսոյ Առաջն. ընտրելիութենէն:

ԽԱՐԲԵՐԴԻ Գաւառ. Ժողովը՝ Վիճակին Առաջնորդ ընտրած է Քղիի Առաջնորդ Տ. Պսակ Մ. Վ. Ը:

ԿՐՕՆ. ԺՈՂՈՎԸ ԴՆԻ նիստին մէջ 15 օրուան փիլիսոնազրկութեան դատապարտեց Խաղիւղի Տ. Պարգեւ քհն. Առաջն. եւ մէկ ամսուան՝ Սամաթիոյ Տ. Յղիշէ քհն. Մովսէսը, եկեղ. կանոնաց հակառակ ընթացքի մէջ գտնուած ըլլալուն համար. — Ժողովը նախորդ չար-

թուան նիստին մէջ Սամաթիոյ երեք եկեղեցիներու քարոզիչ նշանակեց Տ. Արսէն Մ. Վ. Վեհունի, Խաղիւղի քարոզիչ՝ Տ. Սահակ Մ. Վ. Օտապաշեան, եւ Թօփ գարուի՝ Տ. Արսէն վրդ. Գէորգեան. — Որոշեց յանձնարարել Փոխանորդարանին՝ դադրեցնել Տ. Տ. Յովհաննէս, Ներսէս եւ Կարապետ քհն.ները իբրեւ ծեր եւ անկարող իրենց պաշտօնը կատարելու, իսկ ազգարարել միւս քահանաներուն որ իրենց պաշտօնը անթերի կատարեն. — Որոշեց արտօնել Օննիկ Կարապետ Գալաթեանի վերամուսնութիւնը, կինը Խալամացած ըլլալուն համար. — Արաբկիրի Առաջն. Փոխանորդը կը գրէր թէ զինուորագրութեան առթիւ բողոք. պատուելիները չարտօնուած օրեր Հայերու պակներ կ'օրհնեն, եւ կեդրոնէն տնօրինութիւն կը խնդրէր ժողովը որոշեց որ բացառիկ պարագաներու մէջ պակեն, նախապէս կեդրոնէն հրահանգ ստանալէ ետք:

ՎԱՆԱՅ Առաջ. Տեղապահ Տ. Յովսէփ եպս. Սարաճեան Յուլիս 11ին հասած է իր պաշտօնատեղին:

ՈՂՐԱՅԵԱՆ Գրագէտ Արփիար Արփիարեանի մահարձանին բացումը կատարուած է Գահիրէ. Մարմինայի գերեզմանատան մէջ վեհաշուք հանդիսաւորութեամբ: Հոգեհանգստեան պաշտամունքէն ետքը, պարագային յարմար ուշադրաւ բանաստեղծութիւններով ի վեր հանուեցաւ դադափարի զոհին կատարած ազնիւ դործը:

ԱՏԱՆԱՅԻ Առաջնորդ Տ. Ներսէս եպ. Դանիէլեան հրաժարական զրկած ըլլալով, Տեղապահ Ս. Ը հեռագրեց թէ այդ հրաժարականը կը վերաբերի Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին. եւ թէ ինք կրնայ տեղեկացնել իր պաշտճառները Պատրիարքարան:

Արտօնատէր ՀՄԱՅԵԱՆ ԲԶՆՑ. ԷՔՍԵՐՃԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԴԻՐ
ԶԱՄՄԱՅՐ ԲԶՆՑ. ԿԵՂԻԻՐԵԱՆ

ՏՊԱՐԱՆ Տ. ՏՕՂԱՄԱՃԵԱՆ

“ՏԱՃԱՐ”Ի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՐՈՒԹԻՒՆ

Պոստյ եւ Գաւառաց՝ տարեկան	40 դրուց
Արտասահմանի համար	» 10 Ժրանգ
Ռուսիա	» 4 ռուբլի
Ամերիկա	» 2 օլար
Ձեռքէ կը ծախուի պրակը	40 փարա

Հինգ բաժանորդ գտնողը իրաւունք ունի մէկ թերթ ձրի ստանալու

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՐՆԵՐ ԿԱՆԽԻԿ ԵՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՄԻՆ ԴԻՐԱՄԱՏՁԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ

«ՏԱՃԱՐ» ԿՐՕՆԱԹԵՐԹ

ԱՆԴՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ. — Առաջն. Փոխա-
նորդ Տ. Արսէն Բհնյ. Դերձակեան
ԱՂԵՔՍԱՆԴՐԻՍ. — Տ. Ռուբէն Բհնյ. Գա-
բիկեան
ԱՄԵՐԻԿԱ. — Առաջն. Փոխանորդ Տ. Պօ-
ղոս Վրդ. Գաֆթանեան
ԱՅՆԹԱՊ. — Տ. Գարեղին Բհնյ. Պօղար-
եան
ԱՅԻՓՈՆ ԳԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Խաչատուր
Ա. Բհնյ. Տօնէլեան
ԲԱՔԵՐԴ. — Մ. Սանոսեան էֆ.
ԴԱՂԱՏԻԱ. — Առաջնորդ Տ. Բաբգէն Եպս.
Կիւլէսէրեան
ԳԱՀԻՐԷ. — Տ. Յարութիւն Բհնյ. Սար-
գիսեան
ԵՕՂԱՍ. — Առաջնորդ Տ. Խորէն Մ. Վրդ.
Դիմաքսեան
ԵՐՋՆԿԱ. — Տ. Մեսրոպ Բհնյ. Թորոսեան
ՋՄԻԻՆԻԱ. — Տ. Յարութիւն Բհնյ. Տ.
Սարգսեան
ԷՍԿԻՇԷՀԻՐ. — Տ. Գալուստ Բհնյ. Տ.
Գալուստեան
ԿԱՐԻՆ. — Առաջնորդ Տ. Սմբատ Եպիսկ.
Սաատէթեան
ԿԻՐԱՍՈՆ. — Մաթոս էֆ. Թորքառլեան
ԿԻՒՄԻԻԼՃԻՆԷ. — Տ. Ներսէս Բհնյ.
Նշանեան

ՄԱՐԱՇ. — Տ. Հմայեակ Բհնյ. Վարժա-
պետեան
ՄԱՐՁՈՒԱՆ. — Յակոբ էֆ. Սրապեան
ՆԻԿՈՄԻԴԻԱ. — Տ. Ոսկի Բհնյ. Պիպիեան
Շ. ԳԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Նաթան Բհնյ.
Տառեան
ՈՒՇԱՔ. — Կարապետ էֆ. Քէհեանեան
ՊԱՆՏՐՄԱ. ՊԱԼԸՔԷՍԻՐ. — Առաջնորդ Տ.
Կարապետ Եպիսկ. Մաղլըմեան
ՊԱՂՏԱՍ. — Առաջնորդ Տ. Մովսէս Ա.
Եպիսկ. Կէօմրիւքեան
ՌՈՒՍՃՈՒՔ. — Տ. Մկրտիչ Բհնյ. Մըրջ-
նիկեան
ՌՈՏՈՍԹՈ. — Առաջնորդ Տ. Գէորգ Մ-
Վրդ. Ասլանեան
ՍԱՄՍՈՆ. — Առաջնորդ Տ. Սահակ Մ. Վ.
Օտապաչեան
ՍԵՔԱՍՏԻԱ. — Առաջն. Փոխանորդ Տ.
Թէոփիլէ Բհնյ. Օտապաչեան.
ՍԵԼԱՆԻԿ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Կարա-
պետ Բհնյ. Թուխմանեան
ՏԱՐՏԱՆԷԼ. — Տ. Դիոնեսիոս Բհնյ. Տրէզ-
եան
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ. — Դաւիթ էֆ. Մովսէս-
եան
ՏԻՄԷԹՕԴԱ. — Տ. Գէորգ Բհնյ. Թէրզեան
ՓԱՐԻՁ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Վառմշա-
պուհ Բհնյ. Բիպարեան
ՔՂԻ. — Առաջնորդ Տ. Պսակ Վրդ.
ՅԻԼԻՊԷ. — Տ. Տաճատ Բհնյ. Դերձակեան
ՅՐԷՋՆՈ. — Յակոբ էֆ. Նշկեան

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՂՋԱՆՅ ԳՈՒԷՃ ՍԿԻՏԱՐ

Ամերիկեան աղջկանց Գոլէճը կը բող-
ուի Սեպտ. 14ին: Այս Գոլէճը Թուրքիոյ
մէջ միակ հաստատութիւնն է որ կ'անցնէ
բարձրագոյն կրթութիւն կուտայ: Այս
վարժարանին մէջ կ'աւանդուին՝ Գիտու-
թիւնը, Պատմութիւն, Ուսողութիւն,
Գրականութիւն, Մանկավարժութիւն, Փի-
լիսոփայութիւն եւ Լեզուներ:

Գոլէճը չորս տարուան դասընթացը
մը ունի: Անդդիւրէն չղիացողներուն դիւ-
րութեան համար մասնաւոր յետադարձ մը
բացուած է այդ լեզուին ուսուցման հա-
մար: Ակիւտաբ Ժոն Տայնսթը Ատտիազարի
Հայունիաց վարժարանի եւ ողջ համա-
հաւասար հաստատութեանց շրջանաւարտ-
ները Գոլէճէն առաջին կարգը կ'ընդուն-
ուին առանց ընդունութեան:

Գոլէճի Լախապատրաստական Բաժինը
կը քննուի Ամաւուտգիւղ կը շնորհուի
միայն այն աշակերտները որոնք տասը
տարեկանէն վեր են:

Ինչերթիկները պէտք է զր առաջ դի-
մեն եւ 2 ոսկի աւանդ ձգելով ապահո-
վեն մօտքը առաջիկայ տարուան համար:

Իմել Տնօրէնութեան Ամաւուտգիւղ
ամէն երեքշաբթի օրերը, ստորուան ժամը
10—12:

1—5

ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆՔ ՀԱՅ. Ս. ԵԿԵ-
ՂԵՑԻՈՅ, բաղմաձայն մշակմամբ Խ. Դ.
Ի. — Ա. Տէր ողորմեայ (Արք. Աստուած
եւն.) քառաձայն խառն խումբի համար
30 կոպեկ:

Բ. Հանգստեան (ննջեցելոց կարգի)
քառաձայն խառն խումբի համար, 60 կոպեկ:

Հրատարակուած են Էլքայակա՛ն Ժրկ-
տող նօթագրութեամբ, եւ յարմար են թէ
երգելու առանձին խմբամասերու համար,
եւ թէ նուազակցելու դաջնակի կամ եր-
գէտի վրայ:

Նոյն հեղինակը հրատարակած է նաեւ՝
Օրհներգ Հայրապետական «Բաբէ»,

քանի հրաշափառ... քառաձայն խառն
խմբի համար: 40 կոպեկ:

Դիմել Մոսկուա. — Moscou, (Russie),
Mousicalnaia Torgovlia «P. Urguenson»,
Neglinniy Proyesd, No. 14:

ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ԵՐԱՍԵՆ ՎԱՐՃԱՐԱՆ

(ԵԹՕՆԱՄԵԱՆ ԻՏԱՏՈ)

ԳԻՇԵՐՕԹԻԿ ԵՒ ՅԵՐԵԿԵԱՅ. ՍԿԻՏԱՐ

ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ՎԱԿԵԱՑՈՒԱԾ ՄԵԱՐԻՖԵՆ

Հաստատութիւններս, որոնց արդիւնը-
ները դիմաւորեցան մեծապէս, եւ որոնց
վկայականները վաւերացուցան օրն ծրինէ
կրթական նախարարութիւնէն, ամէնէն
մեծ երաշխիքն են թէ իրենց նպատակին
կը ծառայեն լիովին, թէ կը սորվեցնեն
բացի Հայերէնէ, Յունարեւելէ Յիւստինի
Անգլիերէն եւ Գերմաներէն լեզուները,
եւ դիտական եւ իմաստասիրական ու-
սումները, տալով հայկական ընտիր դաս-
տիարակութիւն մը երկսեռ Հայ պատա-
նիկերու, պատրաստելով զանոնք ամէն
ասպարէզի եւ համալսարանական ուսման,
ձեռամբ 30է աւելի փորձ, հմուտ եւ մաս-
նագէտ ուսուցիչներու:

Ի մօտոյ պիտի բացուի համալսարանա-
կան դասարան մը, մանկավարժական, գի-
տական, առեւտրական եւ լեզուական ճիւ-
ղերու: Քսան թիւը բաւական պիտի սեպ-
ուի բանալու համար առաջին դասարանը
վերաբացումը 1 Սեպտ. Եւ իսկուրը պիտի
սկսին 5 սեպտեմբեր, Բշ:

Աշակերտաց ընդունելութեան համար
դիմել ամէն ուրբաթ, ուղղակի Տնօրէնու-
թեան, աղջկանց վարժարանը, աղաւօտէն
մինչեւ իրիկուն, ու Գշ. եւ Եշ. օրերը ժամը
(Ը. Թ.) 10էն վերջ Սիւնապետի խան,
Հիմնադիր-Տնօրէնին դասագիրքերուն եւ
բառարաններդէն կեդրոնաւորին:

Հիմնադիր-Տնօրէն

ՊԵՏՐՈՍ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

5—2

ԳԻՆ 1 ՂՐՈՒԾ

Տպագր. Ց. ՏՕՂՐԱՄԱՃԵԱՆ

Սուրբան-Համալս Մօրա-Թաշը, Թիւ 16

4. ՊՈԼԻՍ